ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 1093-Ն	*Տեսակը*	Պաշտոնական Ինկորպորացիա
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2007.10.10/50(574) Հոդ.1031	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	30.08.2007
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	28.09.2007
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.10.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

10.06.21 N 977-Ն որոշման փոփոխություններն ուժի մեջ կմտնեն swis.trade.gov.am համացանցային կայքէջի գործարկման օրվանից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 օգոստոսի 2007 թվականի N 1093-Ն

ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 9-րդ կետի դրույթներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(Նախաբանը փոփ. 10.06.10 N 733-Ն)

1. Սահմանել բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների՝

1) ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 03.02.11 N 188-Ն)***

3) ներմուծման բուսասանիտարական հավաստագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) արտահանման բուսասանիտարական հավաստագրի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

(1-ին կետը խմբ., փոփ. 03.02.11 N 188-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հոկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

2007 թ. սեպտեմբերի 28
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ, ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը:

2. Ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման բուսասանիտարական հավաստագրերը հավաստում են բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համապատասխանությունը ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման համար սահմանված բուսասանիտարական կանոնների պահանջներին:

3. Ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման բուսասանիտարական հավաստագրերը տրամադրվում են լիազորված մարմնի կողմից հաստատված բուսասանիտարական հսկողության ենթակա բույսերի և բուսական արտադրանքի ցանկին համապատասխան:

II. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4. Սահմանային մաքսային մարմինների միջոցով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների յուրաքանչյուր տեսակի խմբաքանակի համար Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) պետական տեսուչն արտահանող երկրի կողմից տրված արտահանման բուսասանիտարական անվտանգությունը հավաստող փաստաթղթի (այսուհետ՝ բուսասանիտարական հավաստագիր)՝ փաստաթղթային ստուգում, բուսասանիտարական զննում անցկացնելուց, անհրաժեշտության դեպքում փորձանմուշներ վերցնելուց և դրանց փորձաքննությունից հետո՝ ներմուծման բուսասանիտարական կանոնների պահանջներին համապատասխանության դեպքում տալիս է խմբաքանակի ներմուծման բուսասանիտարական հավաստագիր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման N 3 հավելվածի՝ բացառությամբ սույն կարգի 7-րդ կետում նշված դեպքերի:

5. Արտահանող երկրի բուսասանիտարական հավաստագրի բացակայության դեպքում՝ ներմուծման բուսասանիտարական հավաստագիրը տրվում է միայն բուսասանիտարական լաբորատոր փորձաքննության դրական եզրակացության առկայության դեպքում, որը լրացվում է հայերենով, 3 օրինակից, որոնցից մեկ օրինակը մնում է ծառայության սահմանային հսկիչ կետում, երկրորդը տրվում է որպես ներմուծվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաներն ուղեկցող փաստաթուղթ, իսկ երրորդը տրվում է մաքսային ձևակերպումների իրականացման համար:

6. Եթե բուսասանիտարական հսկողության ենթակա փաստաթղթերն ամբողջական են, և բուսասանիտարական զննման ժամանակ վնասակար օրգանիզմներ չեն հայտնաբերվել, ապա ներմուծման համար բուսասանիտարական հավաստագիր չի տրվում, և դրա փոխարեն բեռն ուղեկցող բուսասանիտարական հավաստագրի պատճենների վրա դրվում է համապատասխան դրոշմ և կնիք: Բեռն ուղեկցող բուսասանիտարական հավաստագիրը պատճենահանվում է երկու օրինակից: Բուսասանիտարական հավաստագրի բնօրինակը մնում է ծառայության սահմանային կետում, իսկ

դրոշմված և կնքված երկու պատճենները վերադարձվում են ներմուծողին, որոնցից մեկը տրվում է մաքսային ձևակերպումների իրականացման համար, իսկ մյուսը՝ որպես բեռն ուղեկցող փաստաթուղթ:

7. Եթե տեսուչը բեռը զննելիս հայտնաբերում է վնասակար օրգանիզմներ, կամ առկա են հիմնավոր կասկածներ, որ բեռում առկա են դրանք, ապա իրականացվում է բեռի նմուշառում, որի վերաբերյալ լրացվում է համապատասխան ակտ՝ նշելով նմուշառման հիմքերը և կասկածի հարուցման պատճառները: Մինչև լաբորատոր փորձաքննության արդյունքների ստացումը՝ չի թույլատրվում բեռի ներմուծումը: Լաբորատոր փորձաքննության արդյունքների հիման վրա՝

1) թույլատրվում է բեռը ներմուծել.

2) բեռը վարակազերծվում է և թույլատրվում է ներմուծել.

3) արգելվում է բեռի ներմուծումը: Ընդ որում, այս դեպքում լրացվում է համապատասխան ակտ:

8. Սահմանային հսկիչ կետում մաքսանենգ ճանապարհով ներմուծված կամ բեռի անվտանգությունը հավաստող փաստաթղթեր չունեցող բեռների հայտնաբերման դեպքում բեռը ենթարկվում է զննման, փաստաթղթային ստուգման, կատարվում է նմուշառում՝ լաբորատոր փորձաքննությամբ բեռի անվտանգությունը որոշելու համար: Մինչև ծառայության սահմանային հսկիչ կետի կողմից բեռի նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը՝ բեռի ներմուծման գործընթացը կասեցվում է, և դրա նկատմամբ որևէ գործողություն չի կատարվում:

9. Բեռի ներմուծման գործընթացը կասեցվում է սահմանային հսկիչ կետի տեսուչի համապատասխան որոշմամբ, որի մասին նա անհապաղ տեղեկացնում է բուսասանիտարիայի պետական ծառայության պետին և 24 ժամվա ընթացքում տրամադրում կասեցման մասին որոշման մեկ օրինակը:

10. Կասեցված բեռի վերադարձման կամ հետագա օգտագործման հնարավորությունը որոշվում է լաբորատոր փորձաքննության արդյունքներով:

11. Կասեցված բեռը բաց է թողնվում փորձաքննության դրական եզրակացության հիման վրա՝ մեկօրյա ժամկետում:

12. Կասեցված բեռի լաբորատոր փորձաքննության արդյունքում ստացված եզրակացության դեպքում բեռը ենթակա է ոչնչացման կամ վարակազերծման, կամ վերադարձման (վերաառաքման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13. Ոչնչացման կամ վարակազերծման, կամ վերադարձման (վերաառաքման), դրա հետ կապված բեռի փորձաքննության, փոխադրման, պահպանման ծախսերը կատարվում են բեռի տիրոջ կողմից:

14. Բեռի վերադարձման (վերաառաքման) դեպքում սահմանային հսկիչ կետում բեռն ուղեկցող փաստաթղթերի վրա դրվում են «Ներմուծումն արգելվում է» դրոշմը և սահմանային հսկիչ կետի տեսուչի անվանական կնիքն ու ստորագրությունը:

III. ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

15. Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները սահմանային հսկիչ կետերում ենթակա չեն բուսասանիտարական վերահսկողության, եթե դրանք գտնվում են կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների արտածումը բացառող, կնիքով զմռսված և փակ տրանսպորտային միջոցներում:

16. Եթե բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները գտնվում են այնպիսի տրանսպորտային միջոցներում, որոնցից հնարավոր է վնասակար օրգանիզմների ներթափանցումը շրջակա միջավայր, ապա դրանք նույնպես ենթակա են պարտադիր բուսասանիտարական ստուգման:

17. Տարանցիկ փոխադրման դեպքում՝ բեռն ուղեկցող բուսասանիտարական հսկողության անհրաժեշտ փաստաթղթերը ծառայության սահմանային հսկիչ կետում չեն փոխարինվում, տարանցիկ փոխադրման ամբողջ ընթացքում ծառայում են որպես բեռն ուղեկցող փաստաթղթեր:

18. Բեռների տարանցիկ փոխադրումն իրականացվում է «Տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմով: Բեռի տարանցիկ փոխադրումը թույլատրելու դեպքում ծառայության սահմանային հսկիչ կետում բուսասանիտարական հավաստագրի վրա դրվում են «Տարանցիկ փոխադրումը թույլատրվում է» դրոշմը և սահմանային հսկիչ կետի տեսուչի անվանական կնիքն ու ստորագրությունը:

19. Սույն կարգի 16-րդ կետում նշված տրանսպորտային միջոցներով տեղափոխվելու դեպքում բեռների տարանցիկ փոխադրումն արգելվում է, եթե՝

1) հայտնաբերվել են կարանտին վնասակար օրգանիզմներ.

2) բացակայում է բեռն ուղեկցող բուսասանիտարական հավաստագիրը.

3) չեն ներկայացվել բեռի անվտանգությունը հավաստող այլ ուղեկցող փաստաթղթեր:

20. Տարանցիկ փոխադրումն արգելվելու դեպքում բեռն ուղեկցող բուսասանիտարական հավաստագրի վրա դրվում է «Տարանցիկ փոխադրումն արգելվում է» դրոշմը, իսկ անվտանգությունը հավաստող ուղեկցող փաստաթղթերի բացակայության դեպքում «Տարանցիկ փոխադրումն արգելվում է» դրոշմը դրվում է բեռն ուղեկցող փաստաթղթի՝ ապրանքատրանսպորտային բեռնագրի վրա:

III. ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

21. Բուսասանիտարական հավաստագիր ստանալու համար ծառայության սահմանային հսկիչ կետ է ներկայացվում հայտ, որում նշվում են՝

1) արտահանող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

2) ներմուծող երկրի անվանումը.

3) ստացող անձի անունը, ազգանունը և բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը.

4) արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների անվանումները և քանակությունը.

5) ստացման վայրը:

22. Ծառայությունը հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում անցկացնում է արտահանման ներկայացվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների զննում և դրանց՝ ներմուծող երկրի բուսասանիտարական կանոնների պահանջներին համապատասխանության դեպքում տալիս է բուսասանիտարական հավաստագիր՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման N 4 հավելվածի:

23. Արտահանման համար բուսասանիտարական հավաստագիրը տրվում է արտահանողի կողմից ներկայացված արտահանվող բեռի վերաբերյալ բուսասանիտարական անձնագրի հիման վրա:

24. Բուսասանիտարական հավաստագրի առաջին էջի մասերը լրացվում են հայերենով և անգլերենով՝ կանաչ թանաքով, իսկ երկրորդ էջի նույն մասերը՝ ռուսերենով, ֆրանսերենով, իսպաներենով և արաբերենով՝ սև թանաքով:

25. Բուսասանիտարական հավաստագիրը կազմվում է 3 օրինակից, որոնցից բնօրինակը ծառայում է որպես արտահանվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները՝ մինչև նշանակման վայրն ուղեկցող փաստաթուղթ, մեկ օրինակը մնում է սահմանային մաքսային մարմնում, մյուսը պահվում է ծառայությունում:

26. Արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է միայն բուսասանիտարական զննումից հետո և անվճար:

IV. ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

27. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագիրը տրամադրվում է ներմուծվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները մեկ այլ երկիր արտահանելու դեպքում, եթե դրանք բավարարում են ներմուծող երկրի բուսասանիտարական կանոնների պահանջները:

28. Վերաարտահանումը հավաստագրվում է նաև այն դեպքերում, եթե վերաարտահանվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները չեն վարակվել կամ ախտահարվել վնասակար օրգանիզմներով, և դրանք՝

1) պահեստավորված են.

2) մասնատված են.

3) համակցված են այլ բեռների հետ.

4) վերափաթեթավորված են:

29. Վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի առաջին էջի մասերը լրացվում են հայերենով և անգլերենով՝ դարչնագույն թանաքով, իսկ երկրորդ էջի նույն մասերը՝ ռուսերենով, ֆրանսերենով, իսպաներենով և արաբերենով՝ սև թանաքով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման N 5 հավելվածի:

30. Արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական հավաստագիրը կամ դրա՝ սահմանված կարգով վավերացված պատճենը ծառայում է որպես վերաարտահանվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաներն ուղեկցող փաստաթուղթ:

V. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՈՒՄԸ

31. Բուսասանիտարական հավաստագրերի տրամադրումը մերժվում է հայտը ներկայացվելուց հետո 24 ժամվա ընթացքում, եթե՝

1) ստուգման պահին ներմուծվող կամ վերաարտահանվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համար արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական հավաստագիրը բացակայում է կամ թերի է լրացված (բուսասանիտարական հավաստագրում չվավերացված փոփոխություններ կամ ջնջումներ, բուսասանիտարական հավաստագրում տեղեկությունների բացթողումներ).

2) բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները վարակված են կարանտին վնասակար օրգանիզմներով կամ չեն համապատասխանում ներմուծող (արտահանող, վերաարտահանող) երկրի բուսասանիտարական կանոնների պահանջներին:

32. Ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

(Հավելվածը լրաց. 17.02.11 N 140-Ն, փոփ. 10.06.10 N 733-Ն, 30.07.09 N 857-Ն, խմբ. 03.02.11 N

188-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

Տրված է ..... 200 թ. Ուժի մեջ է ..... 200 թ.

Սույնով թույլատրվում է _____

(ներմուծող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

_____

Հայաստանի Հանրապետություն ներմուծելու _____

(արտահանող երկիրը և ծագման երկիրը)

_____

(բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների անվանումը և քանակությունը)

1. Ներմուծվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները պետք է զերծ լինեն կարանտին վնասակար օրգանիզմներից _____
_____

2. Ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի արտահանող երկրի բույսերի կարանտինի կամ / և բույսերի պաշտպանության պետական մարմնի կողմից տրված բուսասանիտարական հավաստագրով՝ հաստատելով դրանց համապատասխանությունը սույն թույլտվության 1-ին կետում նշված բոլոր պահանջներին:

3. Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծումը թույլատրվում է

պետական սահմանի հետևյալ անցումային կետից _____
_____

4. Ներմուծվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները պետական տեսուչների կողմից ենթակա են բուսասանիտարական ստուգման Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցումային կետերում և նշանակման վայրերում:

5. Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների խմբաքանակները, որոնք չեն համապատասխանում սույն թույլտվության 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի պահանջներին, պետական տեսուչի ցուցումով ենթակա են կասեցման, վարակազերծման, վերադարձման, վերամշակման կամ ոչնչացման:

6. Սույն թույլտվությամբ ներմուծվող բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները պետք է փոխադրվեն երթուղով _____ մինչև նշանակման վայրը
_____

7. Ներմուծման թույլատրված բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները պետական սահմանի անցումային կետերում և նշանակման վայրեր հասնելուց անմիջապես հետո ենթակա են հետևյալ բուսասանիտարական միջոցառումների անցկացմանը _____
_____

Սույն թույլտվությունը տրված է «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա:

Հայտ՝ ..... 200 թ. N .....

Պետական տեսչության պետ _____ _____ Կ.Տ.

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

(Հավելվածը փոփ. 10.06.10 N 733-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N _____

Արտահանողը _____

(արտահանող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը և գտնվելու վայրը)

Ստացողը _____

(ստացող անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

_____

Հավաստագրի տրամադրման հիմքը_____

_____

Հայտարարագրված փոխադրամիջոցը _____

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների անվանումը

_____

Ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների քանակությունը

_____

_____

Ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ծագման երկիրը

_____

_____

Եզրակացություն_____

(ստուգման արդյունքները)

_____

Սահմանվում են հետևյալ կարանտին միջոցառումները _____

_____

Տեղեկություններ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների վարակազերծման կամ ախտահանման մասին _____

_____

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության _____

հսկիչ կետի/բաժնի տեսուչ՝ _____ _____

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

___ _____ 200 թ. Կ.Տ.

(Հավելվածը փոփ. 10.06.10 N 733-Ն, 15.09.11 N 1315-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ STATE SERVICE FOR FOOD SAFETY OF THE MINISTRY OF AGRICULTURE OF THE REPUBLIC OF ARMENIA	**2. ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ PHYTOSANITARY CERTIFICATE** **Original AM №**
1. Արտահանողի անունն ու հասցեն Name and address of exporter	3. Բեռ ստացողի հայտարարագրված անունն ու հասցեն Declared name and address of consignee
4. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն State Service for Food Safety	5. Ծագման վայրը Place of origin
Բույսերի պաշտպանության և կարանտինի մարմին /երկիր/ To Plant Protection and Quarantine Organization of	6. Հայտարարագրված փոխադրամիջոցը Declared means of conveyance
7. Հայտարարագրված մուտքի վայրը Declared point of entry	
8. Տարբերակման նշաններ /նշառում/, փաթեթների թիվը և նկարագրերը, ապրանքի անվանումը, բույսերի բուսաբանական անվանումը Distinguishing marks, number and description of packages, name of produce and Botanical name of plants	9. Հայտարարագրված քանակը Quantity declared

10. Սա երաշխիք է, որ նկարագրված բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները՝ ենթարկվել են տեսչական ստուգման և/կամ փորձաքննության են ենթարկվել՝ համաձայն համապատասխան պաշտոնական ընթացակարգերի, զերծ են կարանտին վնասակար օրգանիզմներից, որոնք նշված են ներմուծող պայմանավորվող կողմից և համապատասխանում են ներմուծող պայմանավորվող կողմի բուսասանիտարական պահանջներին՝ ներառյալ կարգավորվող ոչ-կարանտին վնասակար օրգանիզմների համար պահանջները:

This is to certify that the plants, plant products and other regulated articles described herein: have been inspected and/or tested according to appropriate official procedures, and are considered to be free from the quarantine pests specified by the importing contracting party, and are considered to conform with the phytosanitary requirements of the importing contracting party, including those for regulated non quarantine pests. They are deemed to be practically free from other pests

11. Լրացուցիչ հայտարարագիր
Additional declaration

ՎԱՐԱԿԱՋԵՐԾՈՒՄ ԵՎ/ԿԱՄ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

DESINFESTATION AND/OR DESINFECTION TREATMENT

12. Մշակման եղանակը
Treatment

13. Քիմիական նյութ /ակտիվ բաղադրիչ/ Chemical (active ingredient)	14. Տևողությունը և ջերմաստիճանը Duration and temperature
15. Խտություն Concentration	16. Ամսաթիվը Date

17. Լրացուցիչ տեղեկություն
Additional information

Տրման վայրը
Place of issue

Ամսաթիվը՝
Date:

Լիազորված անձի անունը, ազգանունը
Name of authorized officer:

Կազմակերպության կնիքը՝
Stamp of Organization:

(Ստորագրություն)
(Signature)

РУССКИЙ

1 Название и адрес экспортера
2 Фитосанитарный сертификат
3 Заявленный получатель и его адрес
4 Государственная инспекция по карантину растений РА
Организации (ям) защиты растений (страна)
5 Место происхождения
6 Заявленный способ транспортировки
7 Заявленный пункт ввоза
8 Отличительные знаки (маркировка); количество мест и описание упаковки; наименование продукции, ботаническое название растений
9 Заявленное количество
10 Настоящим удостоверяется, что растения, растительные продукты или другие подкарантинные материалы, описанные здесь: были инспектированы и/или исследованы согласно соответствующим официальным процедурам, и признаны свободными от карантинных организмов, перечисленных импортирующей договаривающейся стороной и отвечают действующим фитосанитарным требованиям импортирующей стороны, включая таковые и для регулируемых некарантинных вредных организмов
11 Дополнительная декларация
12 Способ обработки
13 Химикат (действующее вещество)
14 Экспозиция и температура
15 Концентрация
16 Дата
17 Дополнительная информация:
Место выдачи
Дата
Фамилия и подпись уполномоченного инспектора
Печать организации
Подпись

FRAN3AIS

1. Nom et adresse de l'expéditeur
2. Certificat phytosanitaire N°
3. Nom et adresse déclarés du destinataire
4. Organisation de la protection des végétaux de la République Tchéque a Organisation(s) de la protection des végétaux de
5. Lieu d'origine
6. Moyen de transport déclaré
7. Point d'entrée déclaré
8. Marques des colis; nombre et nature des colis; nom du produit; nom botanique des plantes
9. Quantité déclarée
10. Il est certifié que les végétaux ou produits végétaux décrits ci-dessus
- ont été inspectés suivant des procédures adaptées, et
- estimés indemnes d'ennemis visés par la réglementation phytosanitaire et pratiquement indemnes d'autres ennemis dangereux, et
- sont jugés conformes a la réglementation phytosanitaire en vigueur dans le pays importateur.
11. Déclaration supplémentaire
Traitement de désinfestation et/ou de désinfection
12. Traitement
13. Produit chimique (matiere active)
14. Durée et température
15. Concentration
16. Date
17. Renseignements complémentaires
Lieu de délivrance
Date
Nom et signature du fonctionnaire autorisé
Cachet de l'Organisation

ESPANOL / ESPAGNOL

1 Nombre y direcciфn del exportador
2 **Certificado Fitosanitario**
3 Nombre y direcciфn declarados del destinatario
4 Organizaciфn de Proteccion Fitosanitaria de A: Organizaciфn(es) de Proteccion Fitosanitaria de
5 Lugar de origen
6 Medios de transporte declarados
7 Punto de entrada declarado
8 Marcas distintitas, numéro y descripciфn de los bultos nombre del producto nombre botanico de las plantas
9 Cantidad declarada
10 Por la présente se certifica que las plantas, productos végétales descrito mas arriba
- se han inspeccionado de acuerdo con los procedimientos adecuados, y
- se consederan exentos do plagas de cuarentena, y practicamente exentos de otras plagas nocivo; y que
- se considéra que se ajustan a las disposiciones fitosanitarias vigentes en el pais importador.
11 Declaraciфn adicional
Tratamiento de desinfestaciфn y/o desinfeccifn
12 Tratamiento
13 Producto químico (ingrediente activo)
14 Duraciфn y temperatura
15 Concentraciфn
16 Fecha
17 Informaciфn adicional
Lugar de expediciфn / Fecha / Nombre del funcionario autorizado / Sello de la Organizaciфn

عربي

1 اسم وعنوان الجهة المُصَدِّرة:
2 شهادة صحة نباتية
3 اسم وعنوان المُرسَل إليه المصرَّح بهما:
4 جهاز الحماية النباتية في
في جهاز (أجهزة) الحماية النباتية في
5 المَصدَر:
6 وسيلة النقل المُصرَّح بها:
7 منفذ الدخول المُصرَّح به:
8 عدد ونوع الطرود: العلامات المدوَّنة على الطرود، نوع المُنتَج، الاسم النباتي للنباتات
9 الكمية المُصرَّح بها:
10 نشهد بأنه قد تمّت معاينة و/أو فحص النباتات أو المواد الأخرى الخاضعة للأنظمة والموصوفة أعلاه وفق الإجراءات الرسمية المناسبة وأنها وُجِدَت خالية من مكوّنات يتعيّن الحجر عليها كما هو محدّد من قِبَل الجهة المتعاقِدة المستورِدة وأنها مطابقة لمستلزمات الصحة النباتية المرعيّة الإجراء لدى الجهة المتعاقِدة المستورِدة، بما فيها تلك التي تخصّ المكوّنات الخاضعة للأنظمة لا تلك التي يقتضي إخضاعها للحجر الصحي.
النباتات خالية عملياً من أي مكوّنات ضارّة أخرى.
11 تصريح إضافي
معالجة تسرُّب الطفيليات و/أو الفساد
12 المعالجة
13 مُنتَج كيميائي (مادة نشطة)
14 المدة والحرارة
15 التركيز
16 التاريخ
17 معلومات إضافية
مكان الإصدار
اسم وتوقيع الموظف المسؤول
خاتم المنظمة

لا تتحمّل دولة فرنسا، ولا أيٌّ من وكالاتها أو ممثّليها، أيّة مسؤولية مالية جرّاء هذه الشهادة.

(Հավելվածը փոփ. 10.06.10 N 733-Ն, 15.09.11 N 1315-Ն)

(Ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և պարսկերեն տեքստերի լրացումները և փոփոխությունները տե՛ս 10.06.10 N 733-Ն, 15.09.11 N 1315-Ն որոշումների մեջ)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2007 թվականի
օգոստոսի 30-ի N 1093-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ STATE SERVICE FOR FOOD SAFETY OF THE MINISTRY OF AGRICULTURE OF THE REPUBLIC OF ARMENIA	2. ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ PHYTOSANITARY CERTIFICATE FOR RE-EXPORT Original AM №
1. Արտահանողի անունն ու հասցեն Name and address of exporter	3. Բեռ ստացողի հայտարարագրված անունն ու հասցեն Declared name and address of consignee
4. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն State Service for Food Safety	5. Ծագման վայրը Place of origin
Բույսերի պաշտպանության և կարանտինի մարմին /երկիր/ To Plant Protection and Quarantine Organization of	6. Հայտարարագրված փոխադրամիջոցը Declared means of conveyance
7. Հայտարարագրված մուտքի վայրը Declared point of entry	
8. Տարբերակման նշաններ /նշառում/, փաթեթների թիվը և նկարագրերը, ապրանքի անվանումը, բույսերի բուսաբանական անվանումը Distinguishing marks, number and description of packages, name of produce and Botanical name of plants	9. Հայտարարագրված քանակը Quantity declared

10. Սա երաշխիք է, որ՝
- վերը նշված բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն / պայմանավորվող կողմ/……..- ից /ծագման երկրի պայմանավորվող կողմ/, որն ուղեկցվում է N___ բուսասանիտարական հավաստագրով

☐ բնօրինակ ☐ հաստատված պատճեն

- դրանք՝

☐ փաթեթավորված են ☐ վերափաթեթավորված են ☐ սկզբնական ☐ նոր բեռնարկղերում
- հիմք է ընդունվում՝

☐ բուսասանիտարական հավաստագրի բնօրինակը ☐ լրացուցիչ տեսչական ստուգման արդյունքները,
որոնք համապատասխանում են ներկրող պայմանավորվող կողմի բուսասանիտարական պահանջներին
- Հայաստանի Հանրապետությունում (վերաարտահանման պայմանավորվող կողմ) պահեստավորման ընթացքում ապրանքը չի ենթարկվել վարակման վտանգի:

This is to certify that:
- the plants or plant products and regulated articles described above…….. were imported into the Armenia (contacting party of re-export) from ……(contracting party of country of origin) covered by Phytosanitary Certificate no. ……

☐ original ☐ certified true copy
- they are

☐ packed ☐ repacked ☐ in original ☐ in new containers
- based on the

☐ original Phytosanitary Certificate ☐ additional inspection,
they are considered to conform with the current phytosanitary requirements of the importing contracting party, and
- during storage in Armenia (contacting party of re-export) the consignment has not been subjected to the risk of infestation or infection.

11. Լրացուցիչ հայտարարագիր
Additional declaration

ՎԱՐԱԿԱՋԵՐԾՈՒՄ ԵՎ/ԿԱՄ ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

DESINFESTATION AND/OR DESINFECTION TREATMENT

12. Մշակման եղանակը
Treatment

13. Քիմիական նյութ /ակտիվ բաղադրիչ/ Chemical (active ingredient)	14. Տևողությունը և ջերմաստիճանը Duration and temperature
15. Խտություն Concentration	16. Ամսաթիվը Date

17. Լրացուցիչ տեղեկություն
Additional information

Տրման վայրը
Place of issue

Ամսաթիվը
Date:

Լիազորված անձի ազգանունը
Name of authorized officer:

Կազմակերպության կնիքը
Stamp of Organization:

(Ստորագրություն)
(Signature)

Русский / Russe

1 Имя и адрес экспортера
2 Реэкспорт Фитосанитарный сертификат
3 Заявленное имя и адрес получатели
4 Служба по защите и карантину растений Службе по защите и карантину растений
5 Место происхождения
6 Заявленное транспортное средство
7 Заявленный пункт ввоза
8 Количество и описание посылок: маркировка посылок; наименование продукции; ботаническое название растений
9 Заявленное количество
10 Настоящим удостоверяется, что растения, растительные продукты или другие подкарантинные материалы, описанные выше были импортированы в
(договаривающуюся сторону ре-экспортера)_____из_____
(договаривающейся стороны происхождения) по фитосанитарному сертификату N_____, *оригинал, заверенная копия подлинника которого
прилагается к настоящему сертификату, что они упакованы, переупакованы в оригинальные, *новые контейнеры, что на основании оригинального фитосанитарного сертификата и дополнительного обследования они считаются отвечающими действующим фитосанитарным требованиям импортирующей договаривающейся стороны, и что в время хранения в
_____ (договаривающейся стороне реэкспортере) груз не подвергался
риску заражения вредными организмами.
Отметьте соответствующие квадраты
11 Дополнительное заявление Обеззараживание
12 Метод обработки
13 Химикат (активное вещество)
14 Продолжительность и температура обработки
15 Концентрация препарата
16 Дата
17 Дополнительная информация
Место выдачи / Дата / Фамилия и подпись уполномоченного лица / Печать службы

FRANCAIS

1. Nom et adresse de l'exportateur
2. Certificat phytosanitaire la réexportation No
3. Nom et adresse declares du destinataire
4. Organisation de la Protection des Végétaux de Pologne à: Organisation(s) de la Protection des Végétaux de
5. Lieu d'origine
6. Moyen de transport déclaré
7. Point d'entrée déclaré
8. Marques des colis; nombre et nature des colis; nom du produit; nom botanique des végétaux
9. Quantite déclaré
10. Il est certifié que les végétaux, produits végétaux ou autres articles réglementes décrits ci-dessus
   - ont été importes en Pologne en provenance de_____(partie contractante
d'origine) et ont fait l'objet du Certificat phytsanitaire N°_____
dont l'original □* la copie authentifiee □* est annexe(e) au present certificat;
   - qu'ils sont emballés □* remballés □* dans les emballages initiaux □* dans de nouveaux emballages □*;
   - que d'après le Certificat phytosanitaire original □* et une inspection supplémentaire □*, ils sont juges conformes aux exigences phytosanitaires en vigueur de la partie contractante importatrice,
   - et qu'au cours de l'emmagasinage en Pologne l'envoi n'a pas été exposé au risque d'infestation ou d'infection.
11. Déclaration supplémentaire
   Traitement de désinfestation et/ou de desinfection
12. Traitement
13. Produit chimique (matiere active)
14. Durée et température
15. Concentration
16. Date
17. Renseignements complémentaires
   Lieu de delivrance, Date
   Nom et signature du fonctionnaire autorisé
   (Cachet de l'organisation)

ESPANOL / ESPAGNOL

1 Nombre y direccion del exportador
2 Certificado Fitosanitario
3 Nombre y direccion declarados del destinatario
4 Organizacion de Proteccion Fitosanitaria de A: Organizacion(es) de Proteccion Fitosanitaria de
5 Lugar de origen
6 Medios de transporte declarados
7 Punto de entrada declarado
8 Marcas distintitas, numero y descripcion de los bultos nombre del producto nombre botanico de las plantas
9 Cantidad declarada
10 Por la presente se certifica
   - que las plantas, productos vegetales descrito mas arriba se importarom en
   .....(pais de reexportation) desde.....(pais de origen) amparados por el Certificado Fitosanitario n°.....? original ? copia fiel certificada, el cual
   se une al presente Certificado,
   - que estan ? empacados ?reempacados ? en recipientes originales ? en recipientes nuevos,
   - que tomando como base ? el Certificado Fitosanitario original ? y la inspection adicional, se considera que se ajustan a las disposiciones fitosanitarias vigentes en el pais importador y
   - que durante el alacenamiento en France (pais de reexportation) el carga-mento no estuvo expuesto a riesgos de infestacibn o infection.
11 Declaration adicional
   Tratamiento de desinfestacion y/o desinfeccion
12 Tratamiento
13 Producto quimico (ingrediente activo)
14 Duration y temperatura
15 Concentration
16 Fecha
17 Information adicional Lugar de expedition Fecha
Nombre del funcionario autorizado Sello de la Organizacion

عربي

1 اسم وعنوان الجهة المصدّرة:
2 شهادة صحة نباتية لإعادة التصدير
3 اسم وعنوان المرسل إليه المصرّح بهما:
4 جهاز الحماية النباتية في
في جهاز (أجهزة) الحماية النباتية في
5 المصدّر:
6 وسيلة النقل المصرّح بها:
7 منفذ الدخول المصرّح به:
8 العلامات المميّزة على الطرود: عدد ونوع الطرود؛ اسم المنتج؛ الاسم النباتي للنباتات
9 الكمية المصرّح بها:
10 نشهد بأن النباتات والمنتجات النباتية أو المواد النظامية الأخرى الموصوفة أعلاه قد تمّ استيرادها من ..... (بلد المنشأ) عن طريق فرنسا (بلد إعادة التصدير) وأنه قد تمّ إصدار شهادة صحة نباتية لها ذات الرقم ..... تمّ إرفاق أصلها* □ صورة مصدّقة عنها □ مع هذه الشهادة؛ وأنه جرى تغليفها □ إعادة تغليفها □ في علافها الأولي في غلاف جديد * □؛ وأنه استنادًا لشهادة الصحة النباتية الأصلية □ وبعد إخضاعها لفحص إضافي □، وُجدت مطابقة لمتطلبات الصحة النباتية المرعية الإجراء في البلد المستورد؛ وأنه خلال تخزينها في فرنسا لم تتعرّض الشحنة لخطر تسرّب الطفيليات أو الفساد.
(*) يرجى التأشير في الخانة □ المناسبة
11 تصريح إضافي
معالجة تسرّب الطفيليات و/أو الفساد
12 المعالجة
13 منتج كيميائي (مادة نشطة)
14 المدة والحرارة
15 التركيز
16 معلومات إضافية
17 التاريخ
مكان الإصدار
(ختم المنظمة) اسم الموظف المسؤول
التاريخ ..... (التوقيع)

(Հավելվածը փոփ. 10.06.10 N 733-Ն, 15.09.11 N 1315-Ն)

(Ռուսերեն, ֆրանսերեն, իսպաներեն, արաբերեն և պարսկերեն տեքստերի լրացումները և փոփոխությունները տե՛ս 10.06.10 N 733-Ն, 15.09.11 N 1315-Ն որոշումների մեջ)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան